«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 74/03-1

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 28.04.2022թ. ժամը 17:30

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրենից `21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումի հետագա ընթացքը ապահովելու`սնանկության գործով կառավարիչ`Ալեքսանդր Մեխակի Կարակեյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ 2022 թվականի Ապրիլի 28-ին ժամ 17:30-ին՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի 22.02.2022թ-ի հետաձգված,նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝«ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրեն՝Ա.Ելինյանը :
Սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Մեխակի Կարակեյանը:

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյան
Դիմումատու՝«ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրեն՝Ա.Ելինյանը:
Սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Մեխակի Կարակեյանը պատշաճ ծանուցված լինելով նիստի տեղի և ժամի վերաբերյալ իր ներկայությունը չէր ապահովել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրենից `21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումի հետագա ընթացքը ապահովելու՝սնանկության գործով կառավարիչ՝ Ալեքսանդր Մեխակի Կարակեյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ լուծման հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց ներկաների ինքնությունը և նշեց,որ սնանկության գործով կառավարիչը պատշաճ ցանուցված լինելով նիստի տեղի և ժամի վերաբերյալ չի ներկայացել,չի ներկայացրել նաև բացատրություն կամ այլ փաստաթղթեր,այդ թվում նաև վճարման վերաբերյալ ապացույցներ:Նախագահն դիմումի ներկայացման համար ձայնի իրավունք տվեց հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանին,ով ներկայացրեց տնօրինության թիվ 12 դիմումը և նշեց որ Ա.Կարակեյանի կողմի անդամավճարների պարտավորությունները «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի հանդեպ կազմում է 517835 ՀՀ դրամի:

Հանձնաժողովի նախագահն նշեց որ նախորդ նիստը հետաձգվել էր պարտավորությունների ճշտման և դրանց ամբողջական մարման ժամանակ տրամադրելու պատճառաբանությամբ,այդ առումով հարց ուղղվեց դիմումատու տնօրեն՝Ա.Ելինյանին,ով

ներյացրեց,որ ըստ էության պարտավորությունների չափերը ճշտվել են բոլոր ցանկություն հայտնած կառավարիչների հետ,այդ թվում նաև Ա.Կարակելյանի և մինչ օրս նրա կողմից իր պարտավորություններից մարվել է՝100 000 ՀՀ դրամի չափով:

Հանձնաժողովի նախագահն ներկա անդամներից խնդրեց հայտնել կարծիքներ:

Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով ներկայացված փաստական հանգամանքները,չվճարման փաստը առկա է և կառավարչի կողմից այն վերացված չէ ամբողջությամբ,այսինք կարգապահական խախտումը վերացված չէ,որի վերացման համար առաջարկեց,նախազգուշացնել կառավարչին և տալ ժամանակ այն ամբողջությամբ վերացնելու համար:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյանը նշեց որ ըստ էության կառավարչի կողմից առկա է «Անդամավճարների,մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ» «ՍԳԿԿ» ԻԿԿ հաստատված Կարգի 2-րդ մասի խախտում,որը կառավարչի կողմից վերացված չի և չկա ոչ մի ընդունելի մեղմացուցիչ հանգամանք կապված անդամավճարների չվճարումների հետ,ուստի նույնպես առաջարկեց սնանկության գործով կառավարչին ենթարկել կարգապահական տույժի՝հայտարարելով նախազգուշացում և տրամադրել,կարգապահական տույժի որոշման օրից, 1 ամիս ժամկետ բացահայտված խախտումը վերացնելու համար:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ գործադիր տնօրենից ՝21.01.2022թ. ստացված թիվ 12 դիմումի հետագա ընթացքը ապահովելու՝սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Մեխակի Կարակելյանի գործողությունների /անգործության/ և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Մեխակի Կարակելյանին հայտարարել նախազգուշացում և տրամադրել կարգապահական տույժի որոշման օրից 1 ամիս ժամկետ, բացահայտված խախտումը վերացնելու համար:

Միաժամանակ հանձնարարել կառավարչին հետագա գործունեության ընթացքում պահպանել «Անդամավճարների,մուտքի և այլ վճարների չափի ու վճարման վերաբերյալ» «ՍԳԿԿ» ԻԿԿ հաստատված Կարգի կանոնները:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Մովսիսյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան